

ԼԵՎՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ
ՓՈԽԱԴՐԱՄԻ ԶՈՑՆԵՐԻ
ԴԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԱՂԵԲՍՆԵՐԸ

Խմբագիր՝ Դ. Վարդումյան

РПАСНЯ АМЕРИКА

ДОБРОДУШІСТЬ
ВІДІЛЕНІСТЬ ОДНОДІЛІ
ДОБРОДУШІСТЬ
ДОБРОДУШІСТЬ

ДОБРОДУШІСТЬ

Միայն լիցի, թե ի մերոց պատահի ազգաց

տիրելոց ծովու (Գոշ, ԳԴ, Ա խմբ., գլ. ՄԺԴ)

Յայոց ժողովողական տնտեսության համակարգում նյութական արտադրության առաջնային ճյուղերից մեկը եղել և մնում է փոխադրամիջոցների կամ տրամսպորտային արդյունաբերությունը, որի արտադրանքը բեռներ և մարդիկ տեղափոխելը է: Յայկական լեռնաշխարհը, լինելով Առաջավոր Սսիայի քաղաքակրթության կենտրոններից, տակավին վաղնջական ժամանակներից (մ.թ.ա. V-IV հազ.) դարձավ նաև տվյալ դարաշրջանում հնարավոր ու առաջնակարգ և բնողուած մինչև մ.թ. ՀՀ կեսերը ժողովողական տնտեսության մեջ իրենց կենսունակությունը պահպանած կամ գոյատևած ներքին ու արտաքին հաղորդակցության երթուղիներին ցամաքային՝ լծկան ու գրաստային, ինչպես նաև՝ ջրային փոխադրամիջոցների ու դրանց ծառայությունների (**Կամուրջների, իջևանատների, ճավամատուց - ճավահանգիստների և այլնի** ստեղծման, օգտագործման և զարգացման բնօրրաններից մեկը):

Սևանա լճի ավագանում հնագիտական գտածոների շնորհիվ աներկբայց ուն հաստատվում է, որ տակավին ուշ բրոնզի դարաշրջանում (մ.թ.ա. XIV-XIII դ.) այստեղ լսյնորեն տարածված են եղել բարդ կառուցվածքի անհվավոր փոխադրամիջոցների զանազան տեսակներ (գանգվածեղ ու ծաղավոր անհիպներով երկանիվ և քառանիվ սայլեր, ծածկավոր քառանիվ շքասայլեր, ռազմակառք) (տի. I-1, աղ.II-3, տե՛ս Պատկերացամկը),¹ իսկ

¹ Ե. Լալայան. Դամրանների պեղումները Խորհրդային Յայաստանում, Ե., 1931, էջ 100-101, 194-200: Խ. Սամուելյան. Յիմ Յայաստանի կուլտուրան, ԽԱ. II, Ե., 1941, էջ 76, 147, 304: A. Մհավառան, Древние повозки из курганов бронзового века на побережье оз. Севан, Советская археология, 1960, N 2.

Սյունիքի և Գեղարքունիք ժայռապատկերները (տի. II-1) դրանց ակունքները հանգնում են մ.թ.ա. V-IV հագարամյակները²:

Միջագետքում և Յայկական լեռնաշխարհում հայտնաբերված շումերական, հեթիթական, խութիտական և ուրարտական սեպագիր արձանագրությունների հնագիտական ու հնէալեզվաբանական ուսումնասիրությունները հաստատում են, որ **ուշքրոնգեղարյան ժամանակներից** այստեղ **սայլ կամ անհիպ նշանակող եզրերը** (տերմինները) կամ բարերի քանակը հասնում է շուրջ տասի: Յայկապես դաշտային ազգագրական նյութերի մանրակրկիտ ուսումնասիրությունը թույլ է տալիս նկատելու սյն ակնառու փաստը, որ հնագույն այդ բառերից մի քանիսը, հայերենին հատուկ չնչին հնյունափոխությամբ, առկա են խոսակցական կամ բարբառային ձևերում և որ դրանք վերաբերում են բնողուած մինչև ՀՀ դ. սկզբները Յայկական լեռնաշխարհում հարատևած սայլերի զանազան տեսակներին կամ դրանց անվանումներին: Այսպես, հնագույն Շումերում վերօհիշյալ կամ նման սայլերը կոչվել են MAR-GID-DA, MAR=սայլ, բեռնատար սայլ. Մանայում և Ուրարտուում՝ MARI կամ MARI-ANNA անվանումները խութիտերեն կամ ուրարտերեն նշանակել են սայլ կամ սայլատեր, կաղքատեր կամ կառապան, որոնք համարվու են նաև ազնվական, պալատական կամ արքունական արտօնյալ ծառայողներ: Յատկանշական է, որ այս անվանումների մեջ սայլ

² Գ. Կարախանյան, Պ. Մաֆյան, Սյունիքի ժայռապատկերները, Ե., 1970, էջ 31-35: Ղ. Մարտիրոսյան, Ղ. Իսրայելյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, Ե., 1971, էջ 13-14, 25-26:

կամ շքակառք իմաստը MAR բառն է կողում:³

Ըստ ազգագրական դաշտային հարուստ նյութերի, դեռևս XIX-XX դարի շեմերին Պատմական Հայաստանի ազգագրական զրեթե բոլոր շրջանների գեղջկական կենցաղում ավանդաբար գոյատևել է զանգվածեղ անիվներով երկանիվ սայլը (տիս. II-4,5), որը անիվը և թափթի կառուցվածքային հիմնական սկզբանքներով նման էր Սևանա լճի ավագանում (Գետաշեն, Լճաշեն) պեղված ուշբրոնզեղարյան երկանիվ սայլերին (բացառյալ Վերջինների շքազարդումները), և որը ժողովրդական հորջորջմամբ կոչվում էր ՄԱՐԱՆ, ԱԱՌԱՆ սայլ (սել):

Ուշագրավ է, որ մարան (մարան) էր կոչվում նաև նույն այդ սայլի զանգվածեղ եռակտոր անիվը յուրաքանչյուր առանձին կտորը, մառնել (մարմել) նշանակում էր ծակել, ագուցել, կապել, միացնել և, որ մարանչի (ակը կապող) էր կոչվում զանգվածեղ անիվ սարողկապող պատրաստող վարպետը:

Ննագիտական, հնեալեզգվաբանական և ազգագրական գուգահեռ նյութերի համադրումը թույլ է տալիս հանգելու հիմնական, բայց և տակավին նախնական այն եղակացությանը, որ Հայկական լեռնաշխարհում առնվազն ուշբրոնզեղարյան ժամանակաշրջանից շրջանառության մեջ եղած ՄԱՐ, ԱԱՌ-ԳԻՇ-ԴԱ, ԱԱՌԻ-ԱՆՆԱ սայլանվանումները ժողովրդական հորջորջումներում ենթարկվելով հինչյունական համապատասխան փոփոխությունների, տեղաբնիկ հայ ժողովողի մեջ պահպանվել և նրա նիշոցով հազարամյակների խորքից մեզ են հասել ՄԱՐԱՆ կամ ՄԱՐԱՆ սել կամ սայլ ծևով:

Ննագույն Միջագետքում *ցից* կամ *ցիցիր* բառերն ունեցել են սայլ կամ անիվ նշանակությունը: Դարևան Պատմական Հայաստանում կասպուրականի, Մուշ-Տարոնի և Բարձր Հայքի ժողովրդական խոսվածքում տակավին

³ И. Дьяконов, Преудыстория армянского народа, Е., Древняя Анатолия (сб.статьеи. Редколлегия: Б.Б. Пистровский, В. Иванов, Р. Ардзинба), М., 1985, с. 169, 183, М. Хачикян, Хурритские и урартские языки, Е., 1985, с. 65, 141, 159; т. Առմաշան, ճաղավոր անիվների պատմությունց, Գիտություն և տեխնիկա, 1972, 6, էջ 26-28: Л. Պետրոսյան, MAR-gid-de, Մար-Մարան սայլ: Պատմա-ստուգարանական փորձ: Հանրապետական Գիտ. նոտարչության, գելուցումների թեզիսներ, Ե., 1976: Լ. Պետրոսյան, Եջեր Հայաստանի փոխադրամիջոցների գարգացման պատմությունց, ՊԲ, Ե., 1966, թ. 3: Խոյմի Հայաստանի անիվավոր փոխադրամիջոցների ազգագրական և հնագիտական գործակները: Կամրապետական գիտ. նոտարչության, գելուցումների թեզիսներ, Ե., 1976: Լ. Պետրոսյան, Եայոց ավանդական մառան սայլ: Շիրակի պատմամշակութային ժառանգություն: Զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1994: А. Մհաբականի, անդ., սոք. 143: Л. Петросян, Армянские народные сухопутные средстсва передвижения. Кавказские этнографические сборники. М., 1972, вып. Vc. 98-118.

20-րդ դ. սկզբներին պահպանվում էին գիգու կամ գագու սել (սայլ) և սայլանիվի գլամ. գունդ անվանումները, որոնք նույնական պահպանական ժամանակների մշակութային աղերսների հեռավոր արձագանք կարելի է համարել:

Ըստ հույական միջնադարի հայոց փոխադրամիջոցների համակարգում առաջնային տեղ է զրավել զանգվածեղ (միակտուր) անիվներով երկանիվ մառան սայլը, որն օգտագործվել է հատկապես գեղջկական տնտեսության ամենատարբեր ոլորտներում, ինչպես նաև պետական, հասարակական կամ անհատական շինարարության ու ռազմական պարտավորությունների կատարման գործընթացում (տիս. I, II-4, 5):

Մառան սայլը⁴ ու նրա զանգվածեղ անիվները կառուցել, կապել, հյուսել են բացառապես փայտից, թափթը սուրանկյուն եռանկյունածե, որն ունեցել է շուրջ 5,5-6,5 մ երկարություն, իսկ ետնամասը՝ շուրջ 2 մ լայնք և, իրոք, որուր բաղկացուցիչ մասերն իրար են ազուցվել (կապվել, մարմարվել) դրանց մեջ բացված անցքերի, ագուցվելիք ծայրամասերի և բացառապես փայտե մեծ ու փոքր գամերի սեպերի կամ մախառների միջոցով՝ գորեթե հար և նման ուշբրոնզեղարյան պեղածո սայլերի սարման եղանակին (տեխնոլոգիային):

Մառան սայլի անիվները (ակ, գլամ, գունդ, մարան - 1մ տրամագիծ) կապել-սարել են երկու, երեք և ավելի կտորից: Ամենագործածական ու տարածվածը եռկտորն է եղել, որոնցից մեջտեղինը (որդա) կենտրոնում ունեցել է քառանկյուն սոնակալ անցք (15x15սմ), իսկ կողերից ամրացվել-մարանվել են հավելյալ

⁴ Հ. Պետրոսյան, Եջեր Հայաստանի փոխադրամիջոցների գարգացման պատմությունց, ՊԲ, Ե., 1966, թ. 3: Խոյմի Հայաստանի անիվավոր փոխադրամիջոցների ազգագրական և հնագիտական գործակները: Կամրապետական գիտ. նոտարչության, գելուցումների թեզիսներ, Ե., 1976: Լ. Պետրոսյան, Եայոց ավանդական մառան սայլ: Շիրակի պատմամշակութային ժառանգություն: Զեկուցումների թեզիսներ, Գյումրի, 1994: А. Մհաբականի, անդ., սոք. 143: Л. Петросян, Армянские народные сухопутные средстсва передвижения. Кавказские этнографические сборники. М., 1972, вып. Vc. 98-118.

Այստեղից էլ հյուսմ՝ փայտագործ արհեստավոր եգրը. հյուսմը հնուց ի վեր փայտամասերը մինչյամ ամրալասել, ազուցվել-հյուսել է չօգտագործելով մետաղյա և ոչ ֆի զամ:

հատվածները (*ափսիզ, հեց*). Ներսի՝ միմյանց հպվող կողերից սրանք իրար միացրել են նախօրոք թրծած փայտե երկուական գլանածն կամ քառանկյուն սեպերով (*մախառ, չիվ*), որոնք ագուցվել են բաղկացուցիչ այդմասերից յուրաքանչյուրի հպման տեղում նախապես քացված երկուական բների մեջ (տիս. I, նկ. 3):

Սայլի ընթացքը տեղաշարժումն իրագործվել է *սոնանիվի միջոցով*, որին լին էն 1-2 և ավելի գույք լոկան անասուն (եզ կամ գոմեշ): Սայլի առեղների և բարձերի տակից ուղղահայաց դուրս եկող սռակալ սեպերի (*ակրա, ատամ*) արանքում ստեղծված բներում (տիս. I, նկ. 3, Զ-3) հանգչող սռանիվի կլոր հատվածներն ազատորեն պտտվել ևն իրենց առանցքի շուրջ, սռնու հետ միաժամանակ պտտելով նաև դրա քառանկյուն ծայրահատվածներին (սոնըպտուկ) խոլ կերպով ագուցված զանգվածներ անհիվները:

Առհասարակ, մշակութային երևույթների և, հասկապես, նյութական մշակույթի ազգաբանական ուսումնասիրությունը պահանջում է պատմական տարբեր դարաշրջանների համեմատական նյուրի լայն ընդգրկում, որը հնարավորություն է ընծեռում բացահայտելու դրանց ծագումը, սկզբնական ծներն ու գործադրման եղանակները, զարգացման և կատարելագործման ուղիներն ու յուրահասկությունները, ինչպես նաև դրանց խոչընդոտող տրամաբանական բնականոն զարգացումը կանխող երևույթները: Այս առօւմով՝ բացառություն չեն կազմում նաև փոխադրության ավանդական միջոցները, որոնց ուսումնասիրությունը ենթադրում է ինչպես ազգագրորեն վավերացված տիպերի հետագոտում պատմա-հնագիտական տվյալներով, այնպես էլ ազգագրական գուգահեռների հիման վու հնագիտական օդինակների ճիշտ վերականգնում:

Ելեկով հնագիտական պեղումների շնորհիվ Սևանա լճի ավագանում հայտնաբերված շուրջ 12 պեղածո սայլերի վերականգնված տարբեր կառուցվածքներից (վերականգնող ճարտարապետներ՝ Բ. Աբգումանյան, Գ. Քոչարյան) (տիս. I-1, II-3) և հենվելով հնագետների այն կարծիքին, որ նախքան դամիացան-

ներում հուղարկավորվելը դրանք գործնականում օգտագործվել են (իհարկե ոչ տնտեսության մեջ)⁵, կարելի է անդել, որ դրանք հատուկ ժիսական սգակառքեր չեն եղել: Փոխադրության այդ բարդ կառուցները նախքան դրանց բարձրաստիճան տերերի մահանալը հենց այդ նույն իշխանավորների սեփականությունն են եղել, նրանց շքեղ ապրելակերպի և բարձր դիրքի արտահայտությունը: Վեհաշուք ու բարդ կառուցվածք ունեցող՝ հնագետների կողմից *արքայական, արքունի* կամ *իշխանական* կոչված բանկարժեք այդ սայլ-«մեքենաներն» այն ժամաների տեխնիկայի վերջին խոսքն են⁶: հանդիսավոր արարողությունների աղիքներով օգտագործվող *շքակառքեր*: Վաղնջական այդ ժամանակներում նույնպես սայլագործ վարպետները նշված սայլերը պետք է որ սարքեին պտուտակային շարժման այն *նույն սկզբունքով*, ինչ որ առտնին կենցաղում կամ տնտեսության մեջ օգտագործվող սայլերը: Ուստիև, այդ սայլերը պետք է որ տեխնիկապես համապատասխանեին իրականում գործադրելու պահանջներին:

Սակայն այդ պեղածոների՝ առաջին հայցքից վազաբետորեն վերականգնված և հնագետների (Յ. Մնացականյան, Ստ. Եսայան և այլոց) կողմից մեկնաբանված օրինակների կառուցվածքի մանրակոկիտ քննությունը հարուցում է նաև որոշակի առարկություններ:

Գերիշխում է հավանական այն վարկածը, թե սայլանիվի գյուտին, դըանց մտահղացմանը նախորդել կամ նպաստել է բեռներ փոխադրելիս ծանրաքաշ առարկաների տակ ծառաբնի *գլորաններ* կամ *գլաններ* դնելու և բեռները իրելու կամ քաշելու զարգացմանը: Այս առօւմով ուշագրավ և բնորոշ է, որ հայոց մեջ պահպանվել է սայլանիվի նաև *գլան* կամ *գունդ* անվանումները: Ինչպես հնագիտական

⁵ Գ. Կոմի, Դревний Восток в свете новых раск., М. 1956, с.230-232. Ա. Միացական, անդ, ստր.147. Ը. Եսայան, Օб одной неправильной реконструкции. Труды гос. истм. музея Арм., т. 5, Е.1959, стр.95-103. *Նույնի Օրужие и военное дело Древней Армении (I-III тыс. до н. э.)* Е., 1966 стр. 130-139.

⁶ Գ. Կոմի, անդ. էջ 229-230: Ե. Լալայան, անդ. էջ 194-200: Խ. Սամուելյան, անդ. էջ 76: Լ. Պետրոսյան, Դայնովորական փոխադրամիջոցներն ըստ մատենագրության, ԵՊ, Ե, թ. 9:

ճյութերից (Շումեր՝ ՈՒՐ, ՔԻՇ ԱՅ), այնպես էլ Այսրկովկասի ազգագրական իրավանությունից հայտնի է նաև մեկ ծառաբնից միակտոր սոնանիվ պատրաստելու եղանակը: Սկզբում միայն Ետնամասից, հետագայում՝ նաև առշեկց թափքառեղներին (աղ. I, Ակ. 3, Ա-3) ուղղահսկաց ագուցված երկուական սեպերի (տխ. I-3, Ա-8, Զ-2) արանքներում (բներում) ազգութեան պտուվելու շնորհիվ միակտոր սոնանիվը ծառայելէ ողպես պտուտակային շարժման եղանակով բեռներ փոխադրելու հարմար միջոց սայլի նախատիպ: Եթագայում, աշխատանքային գործիքների կատարելագործմանն ու մասնակությունների զարգացմանը զուգընթաց, առեղները կամ թափքը գետնից հնարավորին չափ բարձր պահելու նպատակով, հղանում է առանձին սռնի և արդեն մեծ տրամագծի անհվներն առանձին-առանձին սարքելու և միմյանց խուլ կերպով ագուցելու գաղափարը:⁷ Երկարատև զարգացում ու կատարելագործում ապրելով, արդեն բրոնզեդարյան ժամանակաշրջանում ստեղծված է փոխադրության անհվավոր սարվածքի մի տեսակ, որին մինչ այժմ վավերացված և առավել մոտիկ նախնական բնօրինակից մեկը կարելի է համարել Սևանա լճի ավագանում (Աղսմյան, այժմ Գետաշեն գյուղի նոտակայքում) 1908 թ. Երվանդ Լալայանի պեղած «իշխանական սայլը»:

Քենվելով ազգագրական դաշտային նյութերի վրա (տխ. I, Ակ. 3-է, Ակ. 4) և դրանց օգնությամբ բացելով Ե. Լալայանի կողմից վերականգնված պեղածո օրինակի նկարագրության փակագծերը, պարզում է հետևյալը. Երկանիվ այդ սայլի առեղներից (տխ. I, Ակ. 3, Ա-3) յուրաքանչյուրի գրեթե մեջտեղում, իրարից քիչ հեռու (15-20 սմ), առեղներին ուղղահայաց ագուցված է եղել երկուական փայտասեպ (տխ. I, Ակ. 3, Ա8): Մրանք, դուրս գալով առեղների ու դրանց տակոց ամրացված բարձերի (տխ. I, Ակ. 3-Ա7, Զ1, Է1) ներքեցից, ստեղծում էին յուրատեսակ հնարամիտ բներ

(աղ. I, Ակ. 3, Զ3, Է3), որոնց միջև հազմում ու պտտվում էին սռնու կլոր հատվածները (տխ. I, Ակ. 3, Բ2, Է3): Այս բներում սռնին ագատորեն պտտվում էի իր առանցքի շուրջ, հետո պտտելով նաև իր քառանկյուն ծայրահատվածներին (սռպշտուկ, տխ. I, կ, 3, Բ1) խոլ կերպով ագուցված զանգվածեղ անհվները՝ «...այնպես որ, - գրում է Ե. Լալայանը, - ոչ թե անհվն էր պտտվում, ալ առանցքը (սռնին), ինչպես այժմյան (XIX-XX դդ. սկզբներին) հայկական (երկամիս) սայլերը⁸: Սռնկալ բների պարզ և միաժամանակ հնարամիտ սարվածք, մեր համոզմամբ սկզբունքային, բայց և կնճռում մի շարք հարցերի լուծման հարազատ ու տեղական և միանգամայն ընդունելի բանալի, որի ակնհայտ գոյությունը կարելի էր չամտեսել նաև Լճաշենում պեղված հատկապես երկանիվ սայլերը վերականգնելիս, և դա էլ այն դեպքերում, երբ ձեռքի տակ ունենք ականատես հմուտ ազգագրագետներ Ե. Լալայանի և Խ. Սամուելյանի կողմից Աղյաման-Ն. Գետաշենի պեղածո սայլի բնօրինակի համառոտ, բայց և հավաստի նկարագիրն ու եզրակացությունը:

Ըստ Լճաշենի պեղածո սայլերի վերականգնված օրինակների դրանց ընթացքը պտուտակային շարժումն, իրոր, իրականացվել է միանգամայն այլ սկզբունքով. այն է սայլի թափքի տակոց խոլ կերսով ամրացված քառանկյուն սռնու կլոր (!) ծայրերին հազրած և իրենց առանցքի շուրջ ազգութեան պտտվող եռակտոր, կենտրոնում կլոր անցքավոր զանգվածեղ անհվների միջոցով: Մակայն, Ելնելով առանց մետաղյա անվաղողի, եռակտոր (կամ բազմակտոր) ծանրաքաշ զանգվածեղ անհվի կառուցվածքից ու հաշվո առնելով նաև հնագույն այդ ժամանակներում Յայկական լեռնաշխարհում հաղորդակցության Երթուղիների հնարավոր իրավունքը, հարկ է նշել, որ շատ թե քիչ տևական պտուտակային շարժումն այդ կառուցվածքի սայլով գործնականում միանգամայն անհմար էր, որովհետև չեն դիմանա ոչ սռնու միապաղադ հաստություն

⁷ Մ. Գրեշամզ, Հրանուան առաջնայն տրանսպորտ, Տեսակ, 1956, (ի գր. յան.), ս. 171

⁸ Ե. Լալայան, անդ., էջ 195-196: Խ. Սամուելյան, անդ., էջ 76, 147, 304:

ունեցող անվակիր կլոր ու **բարակ** ծայրահատվածները (սոնպտուկ 50սմ երկար և 10սմ տրամագծով) և ոչ էլ ավելի քան 30-40 կգ քաշ ունեցող բազմակտոր ու անդոր անիվները. դրանք, անտարակույս, չղիմանալով ընդհանուր ծանրության ու տատանումներին, կջաղղվեին կամ կփլվեին: Ազգագրական դաշտային նյութերն, առանց բացառության, հաստատում են, որ ինչպես մառան սայլի սոնանիվո (տիս. I, նկ. 3, Բ1), այնպես էլ կատարելագործված **մյուս բոլոր** տեսակի սովորական, թերևաքաշ ճաղանիվ սայլերի փայտե կամ նույնիսկ երկաթե **սոնիների անվակիր ծայրերը ղեայի ներս անալու աստիճանարար հաստատում են, որպիսի կառուցվածքը միայն կարող է ապահովել այդ հատվածների ամրություն ու դիմացկունությունը.** Դեռ ավելին, նույնիսկ XX դ. 50-60-ական թթ. էլ. Հայաստանի Յանրապետությունում լայնօրեն տարածված թերև ճաղանիվ երկանիվ ու քառանիվ **սայլերի փայտե սոնիների անվակիր կլոր հատվածները** (սոնապտուկները) մաշվելուց կամ ջարդվելուց ապահովելու նպատակով դրանց տակից շփաշերտերի մակերեսին հավասար ագուցում էին երկաթե ներդիրներ (**լակոտ, չուկի**), որոնք պարբերաբար փոխվունորացվում էին:

Յաշվո առնելով այս հանգամանքները, համոզված կարելի է ասել, որ մառան սայլի սոնանիվի մոտավոր մման սկզբունքի կառուցվածք պետք է ունեցած լինեն նաև **պեղածո - երկանիվ**, հավանաբար նաև քառանիվ սայլերի կամ շքակառքերի այդ կարևորագույն մանրամասները:

Մյուս կողմից, առանց անվաղողի ու կողամիակների (տիս. II, նկ.5) զանգվածեղ ու բազմակտոր անիվո սոնու կլոր ծայրերին **իր առամցքի շուրջ** ազատ պտտվելով, աջ և ձախ ազատ թեքվելով ու տատանվելով, իրարահան կլիներ ու կփլվեր: Ողջ առաջավորասիական տարածաշրջանում ինագիտական սեղուներով ղեռւս չի հայտնաբերվել կամ վավերացվել սայլանիվ պարուրող կամ առավել ուշ դարաշրջանների մետաղյա անվաղողի և ոչ մի հետք: Մինչդեռ, ինչպես դիտելի է մեր-

ծավորաբևելյան կամ ինագույն այլ պասկերաքանդակներում բրոնզեդարյան ժամանակաշրջանում, ըստ երևույթին հայտնի են եղել կամ պարբերաբար օգտագործվել են բազմակտոր զանգվածեղ կամ ճաղակերտ անիվները փլվելուց կամ դրանց շփաշերտերը մաշվելուց գոնե ինարավորին չափ պաշտպանող ժամանակավոր, հավանաբար, կաշեփոկ-«անվաղողեր», որոնք անիվո շփաշերտերին ամրացվել են փայտե, պղնձե կամ բրոնզե գամերով⁹: Յնարավոր է, որ օգտագործվել են նաև մետաղյա (պղնձե, բրոնզե ևն) անվաղողեր, որոնք, սակայն, նախքան սայլերը դամբարաններում գետեղելը, որպես թանկարժեք բաղադրամասեր, անիվների վոայից հանվել են՝ հետագա օգտագործման նպատակով:

Այնուամենայնիվ, սրանք հարցադրումներ են, որոնք կարուտ են հետագա ակնկալվելիք գտածոների ուսումնասիրության, որը ինարավորություն կընծեռի նաև Յայաստանում հայտնաբերվելիք համապատասխան նյութերի մեկնարանման:

Արդեն XIX-XXդդ. սկզբների ազգագրական դաշտային նյութերի տվյալներով, մառան սայլի ամենահիմնական և նրա հուսալիությունը երաշխավորող մասի զանգվածեղ անիվների ամրությունը, անջրանցիկությունը, և տաքի ու ցրտի ագիճեցությունից այն պահպանելու նպատակով, նույնիսկ անվաղողերով պարուրած ու կողամրակներով (կապ) ամրապնդած անիվները (տիս. II-նկ. 5)¹⁰ լրացրւիչ շփել-հագեցրել են իին, բայց ղեռւս խոնավություն պարունակող գռնադրով և ապա թրծել՝ «անց են կացրել կոակով»:

Ամփոփելով առաջին իյումբ այս դիտողությունները, կարելի է եզրակացնել, որ ինչպես Յայաստանի ինագիտական գրեթե եզրակի, բայց և բազմահիսոս նյութերը, այնպես էլ այսրկովեասյան ու, հատկապես, Յայկական լեռնաշխարհի ազգագրական հարուստ գուգահեռները թռչյլ են տալիս պնդելու, որ այստեղ գաղտնիքն, իրոք, պետք է բացատրել երկանիվ մառան սայլի սոնկալ բների և իր ա-

⁹ Գ. Կանա, անդ. էջ 230, նաև նկ. 84 և աղ. XXIV:

¹⁰ Գ. Լոսի, Արմենիա, տոմ II, Տսֆլուս, 1910, ս. 465.

ռանցքի շուրջ պտտվող սռնամիվո՛ **անվկիր քառանկյուն** ծայրահատվածներին խոլ կերպով ագուցված զանգվածեղ անիվներն իր հետ միաժամանակ պտտող սռնու գոյությամբ (տխ. I. Ակ. 3, Բ. Ե), որպիմին, ըստ երևույթին, պետք է փնտրել նաև հնագույն պեղածո քառանիվ սայլերի. շքակառքերի ու զանգվածեղ կամ բազմաճաղ (28!) երկանիվ ռազմակառքերի կառուցվածքներում:

Լճաշենի պեղածո սայլերի գրեթե կեսը անձածկ կամ ծածկավոր **քառանիվ** շքակառ քեր են, որոնցից երկուսի վերականգնված օրինակները ցուցադրված են Հայաստանի պատմության պետական թանգարանում¹¹ (տխ. I. Ակ. 1): Ուշադիր ու մանրակոկիտ ուսումնասիրությունը, սակայն, կարող է համոզել, որ դրանց վերականգնված մանրամասների մեջ ընդհանուր բնույթ կրող էական անշտություններ են թույլ տրված, որոնք կառուցվածքային առումով ունեն սկզբունքային կարևոր նշանակություն և վերանայման ու ճշգրտման կարիք են գգում:

Ըստ առաջարկված այդ վարկածի՝ սայլի քառանկյուն թափքի տակից խոլ կերպով ամրացված է ոչ միայն ետևի, **այլև առջևի սոնին** քառանիվ տրանսպորտային մեքենայի մի սարվածք, որն իսպառ բացառում է շրջադարձ կատարելու ամենափոքր իսկ հնարավորություն¹²: Իրականում նման քառանիվ փոխադրամիջոց գոյություն ունենալ՝ կիրառվել չի կարող: Առջևի շրջադարձ կատարելու հնարավորությունից գորեկ, անշարժ սռնու վերակառուցված ոչ ծիշտ կառուցվածքից էլ բխել է սայլերի առեղները (տխ. II-Ակ.-3,Բ) թափքին միացնել-հարմարեցնելու սխալ վերականգնումը (տխ. II, Ակ. 3Ա): Այստեղ առեղների ետնամասերը և քառանկյուն թափքի առաջնամասը միմյանց ագուցել-միացնելու վերականգնված հնարքներն իրականում **գործարկել անհնար է**: Նման սարվածքի դեպքում, փոքր իսկ շրջադարձի փորձ կատարելիս, ինչպես առեղների հորիզոնական բները, այնպես էլ դրանցում ագուցված բարակ փայտա-

ծողերը չեն դիմանա, իեշտությամբ կջարդվեն:

Տարակիւսանքի տեղիք է տալիս նաև թափքի քառանկյուն շրջանակը և դրա տակից ետևի և առջևի սռնիներն ագուցելու անհավանական միջոցը. ծանրաքաշ ու դանդաղընթաց սայլի և զգուժի ողջ ծանրությունն այստեղ ընկնում է թափքի շրջանակն ու սռնիներն իրարմիացնող ուղղահայաց ագուցված բարակ ու կարճ 1սմ տրամագիծ (!) և 7 սմ երկարություն ունեցող փայտե երկուական բարակ ամրակների վոա, որը գործնականում հնարավոր չէ (տխ. II-Ակ. 3)¹³: Կարելի է առանց երկմտելու ասել, որ եթե նույն կամ առավել ամրագույն փայտատեսակներից, նման կառուցվածքի ու չափերի և նշված մանրամասներով (բաղադրիչներով) մեր օրերում քառանիվ այդպիսի մի սայլի (տխ. II, Ակ. 3Ա, Բ. I. Ակ. 1) նմանակ սարցեր, ապա այն, ամենայն հավանականությամբ՝ կարճատև փորձարկման չէր դիմանա՝ «և ... չշարժեր սայլիկն այն, և ... չխաղայր անիւն այն...»:

Պեղածո՝ զանգվածեղ անիվներով **երկանիվ սայլերի սռնանիվ կառուցվածք** ունենալու այստեղ առաջ քաշված վարկածն առավել հավանական է թվում: Քառանիվ սայլերի թափքի ու առջևի սռնու և առեղների ու թափքի միացման ու համագործակցման հնարավոր և ընդունելի կառուցվածքի հետագա ճշգրտումը հնարավոր կոառնա ինչպես պեղածո նոր նյութերի, այնպես էլ ազգագրական հավաստի գուգահեռների ապագա համեմատական քննությամբ:

Ինչքան էլ որ ցածաքային, այնուամենայնիվ, Հայկական լեռնաշխարհի ավանդական տրանսպորտի համալիրում որոշակի դեր են կատարել նաև ջրային երթուղիներն ու փոխադրամիջոցները, որոնց շնորհիվ հաղթահարվել, կարճվել կամ շաղկապվել են հաղորդակցության ինչպես միջոնակավայրային ճանապարհները, այնպես էլ համերկիային ու տարանցիկ մայրուղիները: Տարածքի առանձնակի կտրտվածությունը և մեծ ու փոքր լճերի

¹¹ *Մհապականի*, ամդ. էջ 143, Ակ. 1, 8., 9.

¹² Ամդ. էջ 143:

¹³ Ամդ. էջ 143, Ակ. 1, 8., 9.

Գրիգոր Նարեկացի, Տաղեր, Ե., 1991, էջ 38:

ու գետերի առկայությունը որոշակի կնիք են դրել նաև տարատեսակ այդ փոխադրամիջոցների ու դրանց օգտագործման եղանակների վեա: Բազմաթիվ լճերից մեծությամբ ու նշանակությամբ առաջնակարգ էին Վանը, Սևանը և Կապուտանը (Ուրմիան), գետերից՝ Տիգրիսն իր վտակներով, Եփրատն ու Արածանին, Արաքսն ու ճորոխը ևն: Լճերի կղզիները և լճափնյա կամ գետափնյա քաղաքներն ու գյուղերը դարեր շարունակ հաղորդակցվել են **գետանցմերով**: լաստերով ու լաստակամուրջներով, փայտակերտ կամ քարակոփ կամուրջներով, տկալաստերով (տոփ) կամ նավակներով ու նավերով:

Ինչպես որ ցամաքային երթուղիների համար հայտնի լեռնանցքները (Զորա-պահակ, Սողք կամ Սելիմի, Սևանի, Դրունք Կիլիկոն ևն), այնպես էլ գետանցմերը, որպես ճանապարհներն իրար միացնող որոշակի ու անկապտելի հանգուցակետեր, պետությունների կամ իշխանությունների կողմից պահպանվում, հովանավորվում և քաջ հայտնի էին երու կամ մոտիկ երկուներին ու տեղացիներին: Այսպես Արաքսի աջ ափին, Արցախի հարևանությամբ Փայտակարանում գտնվող Վարդանակերտ ավանի մոտակայքի միևնույն գետանցի մասին վկայությունների ենք հանդիպում տարրեր հարյուրամյակների (VII-XII-դդ.) հայ մատենագիրների մոտ¹⁴: Արդեն XIX. և XX. սկզբներին միայն Արաքս գետը կտրում-անցնում էի ավելի քան 15 գետանց...¹⁵ Կարևոր առևտրատնտեսական ու ռազմական նշանակություն ունեին նաև Հայկական լեռնաշխարհը ծևատող շատ այլ երթուղիներ հանգուցող րազմաթիվ գետանցներ, որոնք գտնվում էին Եփրատ-Արածանի, Տիգրիս, Կուր և այլ գետերի կամ դրանց վտակների վոա:

¹⁴ Պատմութիւն Սերեսի: Աշխատամիջությամբ Գ. Վ. Արգարյանի, Ե., 1979, էջ 126: Առմեն. Պատմություն: Աշխատասիրությամբ Ա. Տեր-Ղևոնյանի, Ե., 1982, էջ 32: Ասեփանոս Ասորիկ, Տիեզերական պատմություն, ՄՊր, 1885, էջ 101: Կիրակոս Գամձակեցի, Քայլց պատմություն: Աշխատասիրությամբ Վ. Առաքելյանի, Ե., 1982, էջ 58:

¹⁵ Ի. Շոլեհ, Исторический памятник состояния Армянских областей в эпоху ее присоединения к Российской Империи, СПБ, 1852, с. 722-725. Г. Лини. Армения, т. 1, Тифлис, 1910.

Գետանցման կամ նավարկման հարմար միջոց էի սովորական փայտամած լաստը կամ **տկալաստը**, որը հայոց մեջ տարրեր ազգագրական շրջաններում կոչվում էր նաև տարրեր անվանումներով՝ **տոփի, ափանդ, տկանակ, տկանավակ, քելեկ, կեմի (գամի)**. Կիլիկյան Հայաստանում նաև **խալե, դալե, դայե** ևն: Տկալաստ-նավ սարքելու համար օգտագործում էին դիմացկուն, ճկուն և համեմատարար թերևաքաշ կաղնի, մայթի, լաստենի և այլ ծառատեսակներ, որոնցից առավել գերադասելի էի համարվում **լաստենին**, որն «ի ջրոտ տեղիս լինի. և յորմն նախնիքն գ'լաստ առնեին, և այժմուս գ'նավո շինեին, զի դժվարավ կփտի»¹⁶: Տկալաստը սարում-կապում էին հետևյալ կերպ. միմյանց կապած-ագուցած կամ փայտասեպերով գամած-ամրացված րարակ գերաններից կամ տափակ ու քառանկյուն տախտակներից կագմած տախտակամած լաստահատակո տակից մի քանի շարքով կապում-ամրացնում էին ոչխարի, այծի, եզան կամ զոմեշի օդալից, հաճախ՝ նաև կպրամած տիկեր, որոնք լաստը հուսալիորեն պահում էին ջրի մակերեսին: Նման տկալաստերի նկարագրության հանդիպում ենք ինչպես հնագույն ու միջնադարյան, այնպես էլ XIX դ.-XX դ. սկզբների րազմաթիվ հեղինակների մոտ¹⁷:

Հայկական լեռնաշխարհում գետանցման նպատակով լաստերի կամ տկալաստերի միջոցով կառուցվում էին **շարժական** կամ **ժամանակավոր կամուրջներ**. Այսպես, օրինակ, Տակտիկոսը Կորրուլոնի արշավանքների մասին (Խ.՝), բագմիցս հիշատակում է հայերի կամ պարթևների ու հոռմեացիների կողմից կառուցված՝ Եփրատ-Արածանին գոտկող

¹⁶ 2. Ալիշան, Հայ բուսակ կամ հայկական բուսականություն, Վենետիկ, 1895, էջ 211:

¹⁷ Երրորդոսոս, Պատմություն ինը գրքից, Ե., 1986, էջ 79-80, 307: Տակիսոս, Ե., 1941, էջ 33, 67, 105, 115 ևն: Արտահամ Կրտսացի, Պատմություն, Ե., 1973, էջ 78-80: Ա. Թաղի-առեանց, ճանապարհորդություն հ Հայս: Կալկաթա, 1847, էջ 140, 155, 250, 164 ևն: Ա. Տրվլիե, Գ. Փիտոն, Ուլունություն ի Փոքր Ասիա, Վիեննա, 1893, էջ 82 ևն: Ա. Թեզեյան, Ակն և ակնեցիք. Փարիզ, 1952, էջ 213-214: Վահե Պայկ, Խարբերդ ու անոր ոսկեղեն դաշտը, Սյունիք, 1959, էջ 8, 81 ևն: Layard H. Audent, Discoveries in the Ruins at Nineveh and Babylon with Travels in Armenia and Kurdistan. London, 1853, ք. 413: Էլլիյա Զելերի (Ուլեզըրություն): Թուրքական աղբուրներ, հու. Գ. Երևան:

«Ժամանակավոր կամուրջների» կամ «նավերով կամուրջների» մաւիշ¹⁸, որոնք ըստ նրա կցւուր ակնարկների, կազմված էրն իրար ամրացված-կապած լաստերից կամ տկալաստերից: Առաջավոր Ասիայի ու նաև Հայաստանի տնտեսական, ռազմաքաղաքական և մշակութային կյանքի զարգացման ու հաղորդակցման ասպարեզում դեռևս Աքեմենյան դարաշրջանից հայտնի «Ալքայական ճանապարհի», այնուհետև «Մետաքսի ճանապարհի» կարևորագույն հանգուցակետ էր լայնահուն Եփրատը գոտկող բազում գետանցներից նաև պաշտպանական նպատակներ ունեցող Զեզնայի գետանցը «Նավակամուրջը Եփրատու», որը հաստ «չուաններով» միմյանց ամրապինդ-կապած՝ «կազմեալ [Հ] նավոք կամ նավակոք»¹⁹:

Նաև ազգագորական տեսակետից առանձնապես հետաքրքիր է Աբրահամ Կրետացու (XVIII դ.) տեղեկությունը Արաքս և Կուր գետերը գոտկող ու նույնական գրեթե ռազմականացված պաշտպանական երկու լաստակերտ կամուրջների մասին. «...Տեսաք գտեղին, ուր խառներ Եփրատն ընդ Կուր գետոյն: Եւ Բ (2) կամուրջ շինեալ մինն ի վերա Երասխայ..., և միւսն յետ խառնելոյն ի վերա Կուր գետոյն: Փոքրիկ նավճակներ շինեալ միաբերթ, որ էր ի փայտե փորեալ չընեխներ /մակույկներ/ և միմեանց ընթեր շարեալ ի վերա ջրոյն գետոյն լայնութեամբն: Եւ շղթայիւք ի հաստ առասանավ, որ էր կապեալ զչոնեխներն ի երկուց կողմաց զիխոցն նավճակաց, զվերի կողմն շղթայիւք և զվարի կողմն առասանավ, որ էր որպես դալիօնի /նավի/ երկաթի հաստ փալամար (ծոպան, մալուխ խարսխին, կառան նաւու): Եւ ի վերա նավճակաց տախտակ հաստագոյն և փայտ շարեալ և պնդացուեալ մսմարավ [գամերով], որ երթային և գալին անցորդը:

Բայց գետոյն կամուրջն Բ(2) զլուխն ողեակս և բրգունս ի նմա թերթածն շինեալ և ի

միջի մնոցա պատրաստութիւն տեսեալ իրահանելեաց. զի մի յանկարծակի թշնամիք ասպատակեալ վնաս ինչ գործիցեն կամրջին: Այլև պահապանք կացեալ ի վերա, որ պահէին ի տուէ և զիշերի, և առանց իրամանի ոչ ոք իշխոր անցանել...»²⁰:

Առավել մանրամասն պատկեր է ներկայացնում Մ. Միրախորյանի՝ XIXդ. 70-80-ականներին վերաբերող ճամփորդական ուղեգործության մեջ վկայած, մուշի կողմերում՝ Տիգրիսի Չորպորա վտակը հատող երթուղու հատվածի գետանցում օգտագործված տկանավակ-քելեկների հետևյալ նկարազությունը. «Սույն զետը [հատկապեալ գարնան եղանակներին բավական կատարի է և ճանապարհորդք տկանավակ [քելեկ] կոչված գործիքով գետի վրայեն կանցնեին: Տկանավակը կրականա օրով լեցուն 16 ոչխարի տկերե, որոնք իրարու հետ կապելու քառակուսի մը ձևացուցած են, վրան դարակ փայտե վանդակուած [տախտակամած], որոյ մեջտեղն 3-4 հոգին ճանապարհի սովորական զոյքովն կարող կլինին կենալ. 2 հոգի թիաւար կարծիկ թիերովն սոյն հետաքրքրական նավակն վարելով (գետանցի) ջրոյ հոսանքին հակառակ շեղութեամբ կը հանեն եզերքն [գետի մյուս ափը]»²¹:

Ուշագրավ է նաև XVIIդ. թուրք ուղեգիրճանապարհորդ Էվլիյա Չելեբիի հաղորդումը Տիգրիս գետի և Սասնա լեռներից սկոզք առնող նրա ծախակողմյան վտակների ջրերում նավարկող տկալաստերի մասին «Այստեղ [Դիարբեքիր-Սմիդում. ավանդաբար] տկերի լաստ պատրաստում են կամուրջների [կամ գետանցների] մոտ: Սրանք մի տեսակ նավեր են. [օդալից] տկերի վրա տախտակ[ամած] է ամրացվում և սրանցով [տկանավերով] կարելի է ձիեր ու հազարավոր կանթար [1 կանթարը մոտ 100 կը] բեռներ տեղափոխել, նարդի կամ սաթրանջ [շախմատ] խաղալ ... և [այստեղից] մինչև Բաղդադ կամ Բասրա հասնել:

¹⁸ Տակիսոս. անդ:

¹⁹ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե., 1990, էջ 174: Հայ ժողովրդը պաամություն. Խո. 1, ՀՍՍՀ ՀԳԱ իրատ., 1971, էջ 661, 809 ևն: Նոր բառագիրը հայկացյան լեզուի, Խո. Բ, ԵՊՀ իրատ., էջ 406 նավակամուրք:

²⁰ Արքահամ Կրեսացի, Պատմություն. Ե., 1973, էջ 78-79: (Ընդգծումները հեռ.):

²¹ Մ. Միրախորյան. Նկարագրական ուղեգործություն ի հայարնակ զավառ Արևելյան Տաճկաստանի [Արևմտյան Հայաստան]. մասն Ա, Կ. Պոլիս, 1884, էջ 30-31, մասն Գ, էջ 57-58, 97:

Դիարբեքիրի կամրջի մոտ [վաճառքի կամ փոխանակության համար] ննան բազմաթիվ [մեծությունը] պատրաստի լաստեր կամ: Նվաստս [Դիարբեքիրից Տիգրիսով] այդ լաստով մի ժամ ճանապարհ անցա...»²²:

Դեռևս վաղնջական ժամանակներից գարգացման բազմադարյան ու դժվարին ուղի անցած Արմենիա-Հայաստանում արդեն մ.թ.ա. Վդ. հայտնի «կաշեպատ» տկալաստ-նավեր սարքելու հմտությունների, դրանց կառուցվածքի ու վարման եղանակների կամ գետերով առևտրա-փոխանակության և այլ նպատակներով ավանդական երթուղային նավարկության մասին է վկայում պատմահայր Յերողոտը²³, ըստ Երևույթին, չխորանալով ու անտեսելով նաև ազգագրական տեսակետից հույս հետաքրքիր ու հնարավոր որոշ մանրամասներ, որոնք մեր կողմից ոչ ամիսն կերպով ենթադրվում և փակագծերում հավելվում են ստորև վկայությանը գուգահեռ: Յիմնականում Արմենիայում կառուցվող այդ «[Տկանավերը, - գրում է նա, - որոնցով [Արմենիայից ասորեստանցի վաճառականները] նավում են [Եփրատ] գետն ի վար դեպի Բարելոն, Կլոր են և ամրողովին կաշեպատ Արմենիայում... նրանք կտրում են ուսիներ [մատղաշ շիվեր]. [որոնցով] պատրաստում [հյուսում] են [լաստանավի կողերը և [անջրանցիկությունն ու չխորտակվելն ապահովելու նպատակով] Ասորեստանից պատվիրատու-վաճառականները գրաստներով՝ էշերով բերում են օդագերծ տկերն ու վիաքաշի կաշին], դրանք [նավի կողերը] պատում [եղ] կաշվե ծածկով, [տակից օդալից տկեր կապած լաստանավի հատակի նման.. և տալիս են դրան [նավին] վահանի նման կլոր ծև [Այդ նավերից] ամենամեծերն ունեն հինգ հազար տաղանդ տարողություն [! 1 տաղանդը = 26, 2կգ x 500 տաղանդ = 140 տոննա. Լ. Պ.]: Նավերը վարում են Երկու լայնաբերան թիակներով Երկու լայնական թիակներով [կամ ավելի]

²² Եվլիյա Շելեքի, անդ. էջ 189:

²³ Եփրոդոսոս, անդ. էջ 79-80, 307: Տես նաև Թսենովինն, Անարասիս, Ե., էջ 50 («Կաշվե լաստեր»): Ընթացիկ, Գեօգրաֆիա Յ 17-ս հնագահ, Լենինգրադ, 1964, XVI, IV, 19 և ծնք. 140 (Ծմբ. 508^a «Կաշեպատ նավ»): Այս պատմիների կամ շեպատ, կաշվե լամ ամրողովին կաշեպատ լաստերի կամ նավերի մասին որոշակի ակնարկները, ամենայն հավանականությամբ տկանավերի կամ տկալաստերի մասին են:

կամգնած մարդ: Նրանցից մեկը թիակը քաշում է դեպի իրեն, մյուսը՝ իրում իրենից: [Արմենիայից]...մեծ մասամբ փոխադրում են գինի կարմիր կարասներով (տիւ. III-2, աղ. II-2)...Բարելոնում բեռը վաճառելուց հետո, նրանք վաճառքի են հանում նաև [Արմենիայում կառուցված տկանավի կմախքը [փայտամած լաստը]..., իսկ [վիաքաշի և օդագերծ տկերի] կաշիները բարձում են գրաստներին [և, որոշ ժամանակ անց ցամաքային ճանապարհուով] ետ են դառնում արմենների մոտ ... քանի Եփրատ] գետը [հոսանքը] ի վեր ոչ մի կերպ հնարավոր չէ նավել, և նույն ձևով [Արմենիայում պատրաստում [եղ] ուրիշ [տկանավեր».²⁴

Մեկնաբանելով Յերողոտի արժեքավոր այս վկայությունը, առանց Երկնտելու կարելի է պնդել, որ նաև նավերը փայտամած լաստահատակ պետք է ունենային և, որ տակից անպայման օդալից տկեր կապած՝ հատկապես մեծ և բեռնատարողունակ այդ սարվածքներն, իրոք, տկալաստ նավեր են եղել: Նաև մ.թ.ա. X-IXդդ. սկսած հենց տվյալ Վդ. արմենները ոչ միայն ժամոր էին առևտրական գործարքներին ու այդ տիպի ջրային փոխադրամիջոցներին, այլև ամենայն հավանականությամբ ընդունակ ու կարող էին այդպիսիք սարքել ու վարել և առևտուր անել: «Առաջին Եգրակացությունը, - գրում է Գ. Սարգսյանը, - որ կարելի է անել այս հաղորդումից, այն է որ Բարելոնի և Յայաստանի միջև կանոնավոր առևտրական Երթևեկություն է եղել: Պատմագիրը իիշատակում է միայն բարելոնցի առևտրականներին, բայց դրանով ամենակին չի բացառվում [նաև] հայ առևտրականների կողմից այդ ուղիները [նույնական] օգտագործելու համգամանքը»²⁵: Դիցուք, հատկապես ասորեստանցիների առևտրատնեսական կյանքը և նիստ ու կացը նկարագրելով, պարտադիր չեր, որ Յերողոտը գրագահեռաբար ու մանրամասն անդրադառնար նաև Արմենիային և «այդ դա-

²⁴ Եփրոդոսոս, անդ.:

²⁵ Գ. Սարգսյան, Պատմահայր Յերողոտոսը, Եփրոդոսոս, անդ. էջ 569 ևն: Դ. Անձնանշան, Երկեր, ետ. Զ, Ե., 1985, էջ 10-12: Ժ. Խաչատրյան, Եփրոդոտոսի Յայաստանին վերաբերող մոլ վկայության մասին: «Բանքեր Երևանի համալսարանի», թ. 1 (94), Ե., 1988:

րաշրջանում միջազգային առևտրի ասպարեզում հայ առևտրականների միջնորդական խոշոր դերին»²⁶: Վերջապես, մ.թ.ա. Վուասորեստանցի մեծածախ վաճառականները նաև հմուտ արհեստավորներ չէին և որպես ավելորդ ծախս ու ժանրաբեռնվածություն իրենց հետ նաև բազում արհեստավորներ ու բանվորներ չէին բերի-տանի, այլ որ առավել բնական ու տրամարանական է՝ Արմենիայում նրանք տեղացի արմեն (հայ) հմուտ արհեստավորներին պետք է որ նախօրոք պատվիրեին տեղական հումքով, մեծ կամ փոքր տարրողունակությամբ «նավեր» սարել-կառուցելու (կապելու) իրոք աշխատատար, ժամանակատար ու պատասխանատու գործը: Որպես վերը նշվածի հավասար ապացույց կարելի է համարել նաև այն իրողությունը, որ բնորդուած մինչև մեր ժամանակներ պահպանվում էր ջրային նման փոխադրամիջոցների օգտագործումը ինչպես Հայկական լեռնաշխարհում, այնպես էլ նրան հարևան հիշյալ տարածքներում: Բնորոշ է նաև տակավին ԽIХ-րդ դարին Տիգրիս գետի և նրա վտակների գետանցներում լայնորեն օգտագործվող՝ մեծ ու փոքր այդպիսի նավերի կամ տկալաստերի վերաբերյալ օտարերկոյա ճամփորդների հետևյալ ընդհանրացումը²⁷. «Ոչ միայն Հերոդոտոսի ծանոթ խոսքին մեջ կգտնենք այս քելեքներուն [տկանավերի] նկարագրությունն ծշղի այնպես ինչպես որ այսօր կտեսնենք, այլ նաև ասոնց նկարը քանդակուած գտնուած է Նինուեյի թիշտը՝ Բալավարի. Լ.Պ.] պալասյին ավերակաց որմոց վրա», - ավելի ծիշտ՝ պալասյի դարպասի բունզե ծածկույթ պաստառներին՝ ավաբակիր կլոր նավի պատկերաքանդակում (տիս. III, նկ.2), նույն Ուրարտու-Արմենիայից կարմիր կարաս բարձած՝ նույնպես ավաբակիր՝ բայց արդեն ճաղակերտ անիվներով քառանիվ սայլի (տիս. II նկ.,2) գրեթե կողքին, որոնք ուղեկցվում են մ.թ.ա. IX-րդ Սալմանասար – III ասորաց թագավորի սեպագիր հոլորտանքներով՝ արմենների հասցեին²⁸:

²⁶ Յ. Մանանյան. անդ:

²⁷ Ա. Տրվլիեև Գ. Փիսոն, անդ, էջ 82:

²⁸ Ի. Շներյան. Դревний Восток. Атлас по древней истории... Таблица 121, рис. 5. Ленинград, 1937. Всемир-

Դեռ ավելին՝ Ախճազետքում Եփրատ և այլ գետերով փոխադրումների կամ այնտեղ ձկնորսության նպատակներով, ջրային այլ փոխադրամիջոցներին (մաշֆուխ, ջախ, քելեկ և այլ գուգահեռ պատրաստում և օգտագործում են դուֆֆա (րյոֆֆա) կոչվող ավանդական, բայց փոքրաքծավալ կլոր նավեր կամ նավակներ (տիս. III, նկ.3,4),²⁹ որոնց սարման եղանակները, արտաքին տեսքն ու վարման միջոցները գրեթե նման են հնագույն Ասորեստանում կամ Հայաստանում հայտնի՝ Հերոդոտոսի նկարագրած «վահանանան կլորածն նավերին»: Արանք 3-4մ տրամագծով, 70-80սմ խորքով անտախտակամած, հարթ հատակով և դրսի կողմից ուղղուցիկ ու նույնպես կլոր բագրիքով, սալականան հյուսածո կլոր նավակներ են, որոնց կմախքը հյուսում են արմավերու տերևներով և, անջրանցիկ դարձնելու նպատակով, արդի պայմաններում ոչ թե տկահատակում կամ կաշեպատում են, ինչպես վաղնջական ժամանակներում, այլ ամբողջությամբ ծյութամածում են դրսից ու ներսից:

Ուշագրավ է, որ արդեն 1845թ. Նինվեի մոտակայքի Նեմրուտ բլուրի հնագույն թաղաք կամ Լարիսա քաղաքի պեղումներից հայտնաբերված հսկայածավալ ու ժանրաքաշ մարդ-առյուծների ու մարդ-եգմերի շուրջ 13 գույգ ճերմակաքար արձան-կոթողներից գոնե մեկ գույգը Անգլիա տեղափոխելու նպատակով հնագետ Հենրի Լեյյարդը տեղացիներով կամ կառուցել տվեց առաջավորասիական ավանդակամ այս տկալաստերից բաղկացած հսկայական տկանավ, որը դեպի Պարսից ծոց գետն ի վար շուրջ հագար կիլոմետր լողալով ընթացավ՝ շնորհիկ թիավար լաստանավի տախտակամածների տասից կապած-ամրացված շուրջ 600 օդալից գոմշատկների³⁰:

Հայկական և օտարալեզու մատենագրական ու հետազա պատմագագրական վկա-

հայ. Աշտարակ, տ. 1, Մ., 1955, ս. 515-516. Հայ ժողովրդի պատմություն, հու 1, ԳԱ հրատ., Ե., 1971, էջ 284-288:

²⁹ Հարուդ միք. Էթնոգрафические очерки, Народы Передней Азии. М., 1957, с. 518-519.

³⁰ Layard H. Austen, անդ, էջ 434 և այլ կերամ, Աստվածներ, դամբարաններ, գիտնականներ, Ե., 1966, էջ 282, 296, 301, 348-351: Զ. Կոսիդովսկի. Երր արկը աստված Եր, Ե., 1987, էջ 34-35, 72-77:

յությունների համաձայն, դեռևս վաղ միջնադարից ու մինչև XIX-ը. ծովագուրկ Յայաստանի չափանիշներով, լճային նավագնացության ասպարեզում նույնպես գգալի է հատկապես Վանա և Սևանա լճերի ջրային երթուղիների և մեծ ու փոքր նավահանգիստների դերը: Յաճախակի են հիշատակվում առանձնային վան-Դատվան երթուղին, Ոստան, Խլաթ, Արծեց-Արծեց ու Առեստավան քաղաքնավահանգիստները և «Երևելի Աղթամար կողու խաղաղ ու անքույթ նավահանգիստը»³¹ (տիս. IV նկ. 2 և 1՝ Արծեց-Ականցի նավամատույց): Սևանա լճի ավազանում գրեթե նույնափիսի դեր կատարում էին Սևանա (հնում Գեղամե), Նորատուս, Կոթ րնակավայրերը, Այրիվանքը և «յանմատչելի ամրոցն ի Սևան կղզվոց», որտեղից 921թ. Աշուտ Բ Երկաթ թագավորը արարական րազմաքանակ հրոսակագորի դեմ «...շուտափույթ պատրաստում է տասնմեկ նավ, ..յոթանասուն ագնվական [«ազատ» սպաների]...և լայնալիճ աղեղներով զինված իր [ռազմի] ժառաներին, որոնք քաջակորով ու նետագության մեջ հմուտ մարդիկ էին... Ապա ինքն էլ նրանց հետ նավ է րարձրանում, և նրանք գնում [նավարկում են թշնամիների դեմ ծովամարտ տալու («Ծովամարտիկ առ թշնամիս»): Եվ հաջողությամբ ...հեռացնում են թշնամիների րազմության ռազմաճակատը, և թշնամին նրանց առաջ փախուստի է դիմում»³²:

Առանձնապես խոսուն են IX-X դդ. Վասպուրականի Արծրունյաց Դերենիկ, Գագիկ շինարար թագավորների ու Գուրգեն իշխանի Երկարամալա գործունեության մատին նույն ժամանակների հայ մատենագիրների վավերացումները, ըստ որոնց, օրինակ, Գագիկ Արծրունին (908-943թթ.) «...զցեց ճանապարհ նավագնացության համար..., լեռների ու դաշտերի ասպարեզով, թգնումյաց (Վանա) ծո-

վով, Մանավազյան նահանգից [սայլերով ու նավերով Վանոսոսավ] րերեց մատուցեց տաշած քարեր, որպես եկեղեցու շինության նյութ,... հրաշագեղ դիտանոցի ավարտման և ... այլ տեղերի համար³³: [Խևկ] հրաշակերտ... Աղթամար Ծաղաքն ու ամրոցը կառուցապատելով ... ծովի խորահատակ հիմքերի բերանին նա դրեց ահավիրապես, հաստահեղույս, րևեռապինդ դրներ: Այսպիսով, ծովի մի մասն առնելով [Աղթամար] կղզու կողմը, նա հրաշալիք գործեց և ստեղծեց խաղաղ ու անքույթ խապահով նավահանգիստ՝ նավերի խմբի նավատորմի համար (տիս. IV, նկ. 2): ... Աա, որ կառուցեց ծովի մեծ խորությունում՝ ապարժեք արեց իրենից առաջ եղած [Վարագա ժայռափոր պալատոներն ու Շամիրամի ջրանցքը կառուցած] ճարտարապետների գործերն ու իմաստությունը»³⁴: Ապա, որոշ ժամանակ անց, Գագիկ թագավորը արարական ցեղախմբից ազատագրելով Աղծնիքի Կոտոմ րնակավայրի ամրոցը «հիմքից տապալեց [այդ] շինությունը, նրա [տուֆ] քաղերը րարձեց [սայլերին] շուրջ 100կմ ցամաքով և ապա Ահավանք նավահանգստից նավերով րերեց [Վանա] ծովի վրայով [Աղթամար կղզի]. տվեց սուրբ եկեղեցու շինարարության համար: Եվ ... կանգ- նեցրեց փառաց տաճարը [Ար. Խաչը՝ 915 - 921թթ.]: Եվ քանզի յայս բոլոր կառույցների] ճարտարապետն էր Մանվելը, ապա նա ... հրաշակերտեց նաև այս եկեղեցին գարմանալի արվեստով»³⁵:

Կարծեք լրացնելով իրականությունն ու իր նախորդների վկայությունները, Գրիգոր Նարեկացին (951-1003թթ.) րարեպատեհ առիթով և աշխարհիկ կյանքի լավատեղյակ իմացությամբ նկարագրում է նաև Վանա լճում նավարկող շքեղ շինվածքով նավի գրեթե մանրամասն պատկերը: Դեռևս X դ. Յայաստանի ջրերում նավարկող կատարյալ սարվածքի այս մեքենայի ու դրա շուրջ երկու տասնյակից ավելի հիմնական րադաղրիչների հնամենի հայկա-

³¹ Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Ե., 1978, էջ 261-262, 296-297 ևն: X. Լսիկ, Արմենիա, ո. II, Տեսլուս, 1940, էջ 162-167 և նկարներ 120 (Արծեց-Ականց), 140 /Աղթամար/:

³² Դովիթաններ Դրասխանակերտոցի. Դայլոց պատմություն, Ե., 1966, էջ 354-357:

³³ Թովմա Արծրունի և Անանուն, նույնը, էջ 258-262:

³⁴ Անդ էջ 269-297:

³⁵ Անդ էջ 300:

կան անվանումների թվարկումն իմկ³⁹ թիակ-ներ, կայս, թռչարան-առագաստ, բարձրադիր դիտարան, ղեկ, նավապետ, (նաւուղիշ), ա-պավանդակ, խարիսխ, ուղղիչ սամիներ, ող-նափայտ (ողնուց, «նավի փոր»), գստի կա-պաններ, լաստ հիմանն հաստարամի, [նավի] գոզք ամփոփման. վանդակապատ, առասան, նավախելի իմաստով՝ խելք շրթանցն եգերաց, գահաւորակին հանգստարանն, մածունք տախտակաշարք (տախտակամած), պնդման թեւեռք [գամեր], բազմականք [բազմոցներ] և այս բաղադրիչների հասկացվածության ու կիրառման հակիրճքայց և խոսուն պատկե-րումը հայոց վաղնջական նյութական մշա-կույթի ներկայացման հազվադեպ մի օրինակ է հայ և օտար մսաւենազրության համայնա-պատկերում: Պատմաազգագրական տեսակե-տից ևս գեղարվեստական այդ անթերի նկա-րագրության հետ թերևս կարող է մոցել միայն «գիլ-գիլ» սայլի կամ շքասայլի պատկերը հենց իր խկ Նարեկացու հայտնի «Տաղ Յա-րության» գողտրիկ երգում, որը նույնպես վկայում է նրա սերտ կապվածությունն իր հայրենի աշխարհի կենցաղին ու առօրյային (սայլ, առեղ, կուրծն սայլին, լուծն իր սամի-քով ու սամոտիքով, անիկ, եզն ամոլին և օ):⁴⁰

XIX. Կեսերին Աղթամար կղզի այցելած Միջագետքի հին մշակույթի նշանավոր հետա-զոտողներից մեկը՝ Ա. Լեյարդը³⁸ փաստորեն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրեց Սբ. Խաչ Եկեղեցու պատկերաքան-դրակները, որոնց հետագա ուսումնասիրու-թյամբ գրադպեցին անվանի շատ գիտնական-ներ (Դ. Լինչ, Դ. Օրբելի, Ե. Լալայան,... և հատ-կապես Սիրարփի Ներսիսյանն ու Ստ. Մնա-ցականյանը ևն): Տաճարի ճակատները գոտ-կող բուսական ու կենդանական զարդամո-տիկներով մշակված հորիզոնական զարդա-գոտիները պարունակում են նաև առանձին

³⁸ Գրիգոր Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Ե., 1985, էջ 339-341, ևն: Ղևոնդ Ալիշան, Ախուլան, Համագրութիւն Յայ-կապան Կիլիկիոյ և Ղևոնդ Սեծագործ, Վենետիկ, Ա. Ղազար, 1885, էջ 372-373:

³⁹ Գրիգոր Նարեկացի, Տաղեր, 1957, էջ 62-64: Նույնի Մա-տեան ողբերգութեան, Ե., 1985, էջ 1012-1015:

⁴⁰ Layard H. Audsley, անդ, էջ 413 ևն: Տես նաև X. Լառչ, անդ: Ա. Օրբելի, Պայտանկու Արմանսկու զօնչեցւա ոստրու Ախտամար, Իզբռանու որդու, Մ., 1968.

հարթաքանդակներ՝ ինչպես Յին, այնպես էլ նոր կտակարաններից և հայ ազգային կամ Արծրունյաց տան պատմությունից առանձին նշանավոր դրվագներ ու առարկաներ: Արան-ցից այստեղ արծարծվող թեմայի հետ աղերս-վում է տաճարի արևմտյան խաչաթեկի հարա-վային ճակատին կերտված առագաստանավի իորիրդանշական պատկերաքանդակը (աղ. III, նկ. 1):⁴¹ որը չնայած իր հին կտակարա-նային բովանդակությանը, արտահայտում է նաև հայոց ջրային փոխադրամիջոցների տվյալ դարաշրջանի տարրերակմներից մեկը՝ Երկարավուն, ճրազների պես ղեպի վեր բար-ձրացող կեռման ու զարդաքանդակ գլխամա-սով և ետնամասով միազանավոր կայմի վե-րամբարձ խոտորնակ ծողի թևերին թառած քառանկյուն ալեծալք թռչարան-առագաս-տով, «որը գքանին գողանայ» (Ղ. Ալիշան):

Կանա լիի հարավային ավից ոչ հեռու Աղ-թամար կղզին նաև ռազմաստրատեգիական տեսակետից արտակարգ հարմար էր պաշտ-պանության համար, որը ղեռևս վաղ միջնա-դարից պահպանում էր իր նշանակությունը որպես Երկրի նշանավոր ամրություններից մե-կը. Պատահական չե, որ տակավին VII. Բյու-զանդական կայսրության ղեմ մղած պայքարի տարիներին այստեղ էր ամրացել հայոց իշ-խան, զորավար Խենոդորոս Ռշտունին: Կղզում Գաղիկ Արծրունու կառուցած «ծովից հինգ կանգուն [մոտ 2,5 մետր] բարձրությամբ, քա-րահատակ ամբարտակը» և այն գոտկող, «մոտ հինգ ասպարեզ [ավելի քամ մեկ կի-լոմետր] տարածությամբ... իրաշակերտ, ահե-ղակերպ... լայնանիստ, բուրգերով ու բարձր աշտարակներով պարիսպը»⁴⁰ անհնար էր ղարձնում թշնամու կողմից որևէ զործողու-թյուն՝ մայրաքաղաք Աղթամարը՝ կամ նավա-հանգիստ-միջնաբերդը գրավելը:

Ակիամերձ կղզիներում նավահանգիստ ու բերդ-ամրոցներ կառուցելու ավանդույթը դիտվում է նույն ժամանակներում նաև «յան-

⁴¹ Պայկական Եկեղեցիներ. Լիսարոն – Ս. Եջմիածին, 1970: Առ. Մացակաման, Աղթամար, «Երերունի» Երաստ., Ֆին-լանդիա, 1985, էջ 10-17: Ե. Լալայան, Վասպուրականի նշա-նավոր վանքերը: Մոթամարի Ս. Խաչ Վանքը, Ազգագրական հանդես, հու. 20, 2, 1900, ետ. 21, թ. 1, 1911, հու. 22, թ. 1912:

⁴² Թովմա Արծրունի և Անանուն..., անդ էջ 296:

մատչելի ամրոցն ի Սևան նուռոց»⁴¹. որտեղ ամրացած Աշոտ Բ Երկաթ թագավորը հենց այստեղ 921թ. տված «ծովամարսից» էլ սկսեց իր հաղթարշավը Հայաստանը արարական լժից ազատագրելու համար: Ավելի ուշ, նման առավնյա նավահանգիստ-ամրությունների համդիպում ենք նաև Կիլիկյան Հայաստանում (XII-XIVդդ.), որտեղ նավահանգիստների մատուցմենքը վերահսկվում էին կից կամ ափերից ոչ հեռու կողմիներում կառուցված ամրոցների կողմից (Կոռիկոս, Այաս ևն):

Երեք կողմից անսիստավորուսյան լեռնաշղթայով շրջապատված պատմական Կիլիկյան Հայաստանը հարավոց շուրջ 500 կմ երկարությամբ ողողվում էի Միջերերականի հյուլիսարևելյան ծովափով, Զահան (Պյուռամոս), Ալեյան (Աարոս), Տարսուս (Կյուլնոս), Սելևկիա (Կալիդանոս) ջրառատ ու նավարկելի գետերով և ուներ տեղական ու միջազգային նշանակության Այաս, Տարսոն, Մերնին, Աղանա, Կոռիկոս, Սելևկիա և այլ քաղաք-նավահանգիստներ, որոնք մտնում էին արքունի տաճ տիրույթների մեջ և անմիջականորեն հովանավորվում ու ենթարկվում էին նիան: Հայոց Կիլիկիայի Սիսուանի պատմության խորագիտական Դ. Ալիշանի, առանձնապես ընդգծելով Հայկական ծովածոցում այն ժամանակներում գործած Այակի առևտրատնտեսական խոշոր դեզը, վավերացնում է, թե «...վեայեն և այժմու քննիչը զի չիք քան զլլյաս անքույթ նաւահանգիստ ի կողմանս Գարամանի և Ասորվոց»... և, որ ի մերայոց հանճար պարադետ և ձեռն աջողակ... կազմեաց, Երաց, Եցոյց զԱյաս, հանդերձլայ՝ նավակայիւր [նավահանգիստներով], ամբարտակօք, բերդիւր ծովու և ցամաքի, մթերանօցք, բաժտամբ [մաքսատուլ], և ամենային որ կարևորն է մեծի և առաջնոյ աշխարհանուտ նաւակայանից պետութեան միոյ»... Այսու նոր դշիսուիմ է «ծովուն Հայոց, որ և ՚ի սակավ ամս հայկական կերդանությանն, թերևս ծոխազոյնս պճնեցավ և ամբարեաց զանս ՚ի մթերից շահսվաճառութեան Երկուց ծազաց

⁴¹ Հովհաննես Դրասխանակերտցի..., անդ էջ 356-357:

աշխարհիր,... զի [Այսա] ոչ համգոյց մի սոսկ էի մեծի ճանապարհի վաճառականութեան արևելից, այլ մարթ է ասել թե և՛ գլուխ, և՛ կենդրուն հանգրուանաց»: Նենց այստեղից է, որ «Հոչակագոյնն և գերագոյն համարեալ ՚ի ճանապարհորդս և ՚ի ճանապարհագիրս միջին դարուց՝ Ապրկոս Պողոս [Մարկո Պողոս] Վենետիկցի (1271-ին) արար սկիզբն Երկարածից ուղևորութեանն յաշխարհս Թաթարաց, Յնդկաց և նենաց, և հայկական նաւու չուեաց ՚ի Պտղոմայիս... (տխ. IV, նկ. 3): Տակավին այդ ժամանակներում «եթե ամենայն ոք որ կամիցի ի Խորին Ասիա Երթալ զսկիզբն ճանապարհին առնէ յԱյսա», որը միջպետական առևտրատնտեսական փաստաթղթերով նաև «որոշանի կոչեն նաւահանգիստ թագավորին Հայոց-Portus Ayasii Domini Regis Ermenie (1274 ամի)»...»⁴²:

Զաջատեոյակ ժամանակակիցներ Ներսես Լամբրոնացու (1350-1425թթ.)⁴³, Առաքել Սյունեցու (1350-1425թթ.)⁴⁴ և այլոց վկայությամբ «զի յիշեն և գտեսակս նաւուց» Կիլիկյան Հայաստանում առանձնապես տարածված էին առազատավոր կամ անառագաստ ծրգանակեր ու նավակներ և հեռազնա ապրանքամարդատար խոշոր առազատանավեր «այծեմնածեա» բերդանավեր կամ «պատերագմիկ» նավեր, «...որը [Երբ] Երկնչին յաւազակաց շիննան չորքանկիւնի բերդ ՚ի յետ կոյս նաւին, նստի ղեկավարն անդ, զի թե յառաջ կոյս նստի ոչ կարէ ուղղել զնաւն. և Երկու թեւ նաւին ՚ի ծեռին իւրում յաջ և յահեակ. և յորժամ ծոի նաւն զմին թեւն յինքն քաշէ և միւսն ՚ի բաց մդէ յինքեանէ, և այնպէս ուղղէ զնաւն»: Բերդանավը «խիստ մեծ է, և Երեք տապադայ [Եռահարկ՝ նավասեմյակ-կայուտներով] ՚ի վերա իրարաց շիննեալ՝ ներքնատուն և նիջնատուն և վերնատուն... . Բերդանավն համանիշ է...մեծամեծ նաւուց ժամանակին

⁴² Ղաղող Ալիշան, անդ էջ 358-359, նկ. 1, էջ 395:

⁴³ Ներսես Լամբրոնացի, Ընտիր մատենագիրը, Վենետիկ, 1865:

⁴⁴ Առաքել Սիւնեցի, Լուծումն առաջա Սահմանացս Դաւիթ Անյաղիր..., Մադրաս, 1797: Տես նաև Գ. Ավետիքյան, Նարեկ աղօրից համարու և գգուշաւոր լուծմամբը (Նարեկութ), Վենետիկ, 1827: Դ. Նայան, Կոռը մեկնութեան, Կ. Պոլիս, 1745:

(*galea-galeone*), զոր Յեթում պատմիչ [XIIIդ.] և այլք խալէ [ղալե, ղայեղ, ղայեխ. Լ. Պ.] գրեն. իսկ Երեքարգեան [Եռահարկ] տներն զայժմեան [XVԴ.] համակարգ պատերազմիկ նաւս կերպարեն, քան է զեռաթի [Եռաթիսկ] նաւս»: Յուրաքանչյուր նավում ծառայում էին առնվազն քսանիհնգ շարքային հիմնականում նավաստի, ի բաց առյալ ծամփորդներին կամ զինվորներին: Այս հսկույածավալ տարողունակ առագաստանավը կայանելու համար օգտագործվում էի հաստ ծովանի ծայրին ամրապինդ կապած Երկարե խարիսխը, իսկ Եթե «կամին հասնել [Ծնդհուայ] 'ի նաւահանգիստն և ոչ կարեն, յայնժամ ձգեն խարիսխն 'ի ցամաք և պնդեն յոյժ. աւպա կալով 'ի նաւին' քաշեն չուանն խարիսխին յինքեանս, և այնպես ինքեանք և նաւս հասնեն 'ի յեզրն»⁴⁵:

Այսայսով, թեկուգ և կարծ ժամանակով (XIX-XIVդ.), այնուամենայնիվ՝ հայոց վաղնջական երագանքը իրականություն էի դարձել՝ *վիճակել էր նաև «...մերոց ազգաց...տիրելոց ծովու»* (Միսիթար Գոշ⁴⁶), սակայն հնարավո՞ր էի՝ «Ո՞չ [առանց] նաւելոյն յառաջ կալցութ զգործ» [Լևոն Բ Մեծ], կամ՝ «...առանց նաւային գրութեան... ու ծովամարտութեան... պաշտպանել զայնքան ափանց... և ցամաքային իսկ անդորրութիւն»...⁴⁷ Այսինքն՝ առանց մշտական հգոր նավատորմի և նավագնացության ստեղծման ու գարգացման անհնար կլիներ Երկրի սոցիալ-տնտեսական ու ռազմապատշաճանունակության ապահովումն ու գարգացումը: Ռժբախտաբար, ժամանակին նաև ծանրակշիռ ծովային պետություն լինելով հանդերձ, Կիլիկյան Յայաստանի *բուն հայկական նավաշինության* և նավագնացության, այդ բնագավառների արհեստագործության ու հմտությունների մասին պատմաազգագրական գրավոր վավերացումներ գրեթե իսպառ բացակայում են, ի բացառյալ նավերի կառուցվածքի կամ նավավարության մասին մեկնաբանական այլ բնույթի ակնարկների կամ հպանցիկ տեղեկությունների:⁴⁸ Այդ իսկ պատ-

ճառով՝ «... առ ՚ի չգոյէ կարևորագոյն և զիտելաց զնախնեացս՝ մերոց նաւարկութեն...»⁴⁹ ոչ է մարթ [Նաև] հավաստել՝ ... թե և *սեփական հայեցի նաւու ք հատեալ անցեալ իցեն ընդ ծովս. ՚ի մթան մնա տակալին չափ նաւարկութեան Սիսուանայ, որպես և *ծովամարտիկ գօրութեան* նոցին. [այնուամենայնիվ, աներկրայ իսկ գոլով Երկոցուն և՝ պետութեանն ու վաճառականաց Յայոց՝ ունել նաւս սեփականս և վարձեալս⁵⁰... որն, ամենայն հավանականությամբ, արդյունք էր ինչպես հարևան Երկրների և հասկապես, իտալիայի նավաշինական խոշոր կենտրոններից (Վենետիկ, Ջենովա, Ֆլորենցիա ևն) նավերի գնման և վարձակալման, այնպես էլ բուն Երկրում ու տարածաշրջանում դեռևս վաղնջական ժամանակներից նաև հայոց մեջ արմատավորված նավաշինության ու նավագնացության ավանդույթների:*

Ազգագրական ու ժողովրդագրական տեսակետից առանձնապես ուշագրավ է նաև նավագնացության և առևտրատնտեսական աշխույժ փոխսհարաբերությունների հորձանուտում ավելի քան մեկ միլիոն բնակչություն ունեցող ու, փաստորեն, բազմազգ Կիլիկյան Յայաստանի հայության և մյուս կողմից Եվրոպական տարածաշրջանի (Իտալիա, Ֆրանսիա ևն) այլազգիների տարբեր խավերի միջև *բարեկամական-գործարարական* ու *խնամիական* գրեթե զանգվածային սերտ կապերի ստեղծման Երևույթը: Պատմական և արխիվային հարուստ նյութերը հնարավորություն են ընձեռում Ղ. Ալիշանին փաստելու, որ «Ոչ միայն բազում ազգաց լեգութ լսէին [Կիլիկիոյ քաղաքաներում], այլև խնամութիւնը և կենակցութիւնը լինէին Յայոց ընդ արևմտեացդ... Ոչ անհաճոյ համարիմ րանասիրաց յիշել զոման ՚ի խնմութեանց աւագորեոյն Սիսուանայ ընդ օտարազգեաց. յաւետ ընդ Փռանկաց, լիտալացիների և այլոց, յորոց մարթ է գուշակել և *զյաճախութիւն ազգախառնութեան հասարակ քաղաքացեաց և ուամկաց*»..., և Նահասետը րերում է մեծահարուստ կամ

⁴⁵ Ղևոնդ Ալիշան, անդ էջ 360, 371-373 և:

⁴⁶ Միսիթար Գոշ, Գիրը դատաստանի, Ե., 1975, էջ 126 և 390:

⁴⁷ Ղևոնդ Ալիշան, անդ էջ 372:

⁴⁸ Տես աստ ծմբ. 37-39:

⁴⁹ Ղևոնդ Ալիշան, անդ 373:

⁵⁰ Նույնը էջ 371 և:

անվանի «հայ արանց ու կանանց» սամուսնությունների, իհարկե, ոչ լրիվ, բայց և վավերացված ցուցակներ՝ «Արք - Շայթ, կանայք օտար» և «Կանայք - Շայթ, օտարազգի արանց»⁵¹:

Ինչպես ցանքաքային, այնպես էլ ջրային բանուկ ճանապարհներով Կիլիկիայի հայկական սետությունը սերտ հարաբերությունների մեջ էր նաև մի կրողմից լսորիթի և Իկոնիայի սուլթանության հետ, որտեղից և՝ Կոստանդնուպոլիսի ու սևովյան նավահանգիստների հետ, սա Շալեսից անցնում էր Անտիոք և «Ասորոց դուռ» լեռնանցքով մինչև Մամետա-Աղանա-Տարսոն քաղաք-նավահանգիստներ և «Դռունք Կիլիկիո» լեռնանցքով մտնում Իկոնիա և դեպի Միջերկրական ու Աև (Պոնտական) ծովեր: Արդեն ԽIII դ. հռչակավոր Այասից դուրս եկող մայրուղիներն անցնում էին դեպի Էյուպիս ու արևելք՝ Զեգմայի կամ Մարաշ-Մելիտիների գետանցներով Մեծ Շայթ ու Միջագետք: Քյուսիսային մայրուղին Ալասից ծգվում էր դեպի Աղանա-Անարզաբա-նիս ու Վահկա ամրոցով՝ դեպի Կեսարիա և այլուր:

Ինչպես բուն Շայկական լեռնաշխարհում, այնպես էլ Կիլիկրայի հայկական պետության մեջ՝ շնորհիվ նաև հարևան առաջավորասիական և հատկապես միջագետքան զարգացած վաղ քաղաքակրթությունների հետ սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական ու պատմամշակութային սերտ աղերսների ու փոխհարաբերությունների, հայ ժողովութղթ

դեռևս վաղնջական ժամանակներից և հատկապես վաղ միջնադարում արդեն օժտվել էր հաղորդակցության ու փոխադրամիջոցների համալիրում ծեղք բերած հմտությունների ու նյութական մշակրւյթի առաջնակարգ միջոցներով: Սակայն, արդեն ուշ միջնադարում և, հատկապես, թուրք-սելջուկյան ու մոնղոլական ավերիչ արշավանքներից ու անկախ պետականության կրրստից հետո և նրանց բազմադարյան տիրապետության հետևանքով հայոց անհվավոր ու ջրային տրանսպորտի ասպարեզում նույնպես վոա հասավ հետագա բազմադարյան ու խորը լճացում և բնականոն զարգացման կանխում ու ետընթաց:

Այնուամենայնիվ, հայոց ավանդական տրանսպորտի ու հաղորդակցության համակարգի պատմապատճերանական ուսումնամիրությունը որոշակիորեն ակնառու է դարձնում, որ չնայած բնականոն ու աշխարհաքաղաքական բազմապիսի խոչընդուներին, այդ բնագավառում ծեղք բերած բազմադարյան փորձի ու հմտությունների շնորհիվ, ընդհուպ մինչև XX դ. շեմերը հայ ժողովուրդը կարողացավ նույնիսկ ամենաղժվարին պայմաններում զոյաւուել ու վարել իր ավանդական և յուրօրինակ տնտեսությունն ու կենցաղը, միաժամանակ գործուն և որոշակի մասնակցություն ունենալով նաև տիրապետող օտար իշխանությունների պետական ու միջազգային առևտրա-տնտեսական կյանքին:

⁵¹ Ղաղաք Ալիշամ, անդ՝ էջ 358-359, 371:

ՊԱՏԿԵՐԱՑԱԿ

Տախտակ I. Ակ.1 Հյուսածո թափքալատերով պեղածո քառանիվ սայլ: Մ.թ.ա. XIV-XIII դդ: Լճաշենի թ. 11 դամբարան: Վերականգնումը՝ հնագետ-ճարտարապետ Գ. Քոչարյանի: Նկ. 2. Երկանիվ մառան սայլի գանգվածեղ անիվ: Չեռք է բերված ՀԽՍՀ Ալավերդու շրջ. Դաեղ գյուղից 1934թ., ՀՊՈԹ: Նկ. 3. Զանգվածեղ անիվներով երկանիվ մառան սայլի կառուցվածքը՝ բաղկացուցիչ մասերի առյուսակ: (Ըստ XIX-XX դդ. սկզբների գրավոր և դաշտային նյութերի. գծանկար Լ. Պետրոսյանի).

Ա- Մառան սայլի թափքը՝ 1. մորուս, "կուրծն սայլի", 2. գործիվոր /կլիաթուբ/, 3. առեղ, 4. կոփ, 5. կողածաղ, 6. թև, 7. բարձ, 8. ատամ, սկրա, 9. փորածաղ:

Բ - սռնի, սեռ, առանցք՝ 1. սռնդպտուկ, 2. թափքի բարձի գոգավորության նստատեղ, բնակալ:

Գ - Զանգվածեղ անիվի (գլան, գումղ, ակ) բաղկացուցիչ մասերը՝ 1. հեց, մառան, ափսիգ, 2. մահառ, շիվ, 3. սեպ, 4. գյուլմեխ:

Դ - Զանգվածեղ անիվ՝ 1. ործա, 2. հեց (մառան, ափսիգ):

Ե - մորուս՝ 1. առեղ, 2. լուծ (հատվածք), 3. լորիս, կղան:

Զ - առեղների տակից ամրացված՝ 1. բարձ, 2. ուղղահայաց ագուցված ատամ-ակրաներ, 3. բուն՝ սռնու կլոր հատվածների նստատեղ՝ բնկալ:

Է - 1. բարձ, 2. ատամ-ակրաներ, 3. սռնու կլոր հատվածը բնկալում:

Տախտակ II. Նկ. 1. Ժայռապասկերներ՝ քառանիվ սայլ լծկանով: Մ.թ.ա. V-IV հազ.

Սյունիք: Գ. Կարախանյան, Պ. Սաֆյան, անդ՝ էջ 31-35: Նաև Յ. Սարահրոսյան, Յ. Խորայեսան, անդ՝ էջ 13-14, 25-56: Նկ. 2. Կարաս բարձած ճաղակերտ անիվներով քառանիվ սայլ՝ լցված գինվորներով: Կից սեպագիր արձանագրությունը հիմուրտանքով ագդարարում է Ուրարտու-Շայաստանից Ասորեստանի Սալմանասար III արքայի (մ.թ.ա. IX դ.) գործերի ավարառումը: Բալավաթի պալասի դարպասների բրոնզե պաստառի պատկերաքանդակ: Բրիտանական թանգարան: Ի. Շերպրես, տառ չե տաճուպա 121 ևն: M. Riemchneider, Des reich am Ararat, Heidelberg, 1966, նկ. 26 (Տես նաև աստ՝ աղ. III, նկ. 2): Նկ. 3. Պեղածո քառանիվ սայլի գծանկար-չափագրություն: Լճաշեն, թ. 11 դամբարան, մ.թ.ա. XIV-XIII դդ.: Վերականգնումը հնագետ-ճարտարապետ Գ. Քոչարյանի: Նկ. 4. Զանգվածեղ անիվներով երկանիվ մառան սայլ: Բարձր Ջայք, Զավախը ևն: Ախալցիսյան շրջ. գ. Օուլրութ, 1936 թ., Ատ. Լիսիցյանի գիտարշավ: ՀՊՈԹ: Նկ. 5. Երկաթե կողամրակներով («կապ») զանգվածեղ անիվ (մառան սայլ): XIX դ. Վերջ, Մշո գավառի Գումդեմիր գյուղ: Յ. Լինչ, Շայաստան, հտ. II (ռուս.), Թիֆլիս, 1910, էջ 465:

Տախտակ III. Նկ. 1. Առագաստանավի պատկերաքանդակ: Աղթամար կղզու Ար. Խաչ տաճար /915-621թ./: Շայկական Եկեղեցիներ /Պատկերակալ ալբոն/, Լիսարոն-Ա. Էջմիածին, 1970: Նկ. 2. Միջագետքյան կլոր նավ: Մ.թ.ա. IX դ.: Բալավաթի պալատի դարպասի բրոնզե պաստառի պատկերաքանդակ: Բրիտանական թանգարան /տես նաև աստ՝ աղ. II, նկ. 2/: Նկ. 3, 4, 5. Եփրատ, Տիգրիս և միջագետքյան այլ գետերում նավարկող ավանդական միջոցներ: XX դ. կեսեր: Խարօձ մսթա... անդ՝ էջ 518-519:

Տախտակ IV. Նկ. 1. Առագաստանավ կանա լճի հյուսիսարևելյան ափին՝ Արծեշ-Ականց գյուղաքաղաք-նավահանգիստ: XIX դ. Վերջ: Յ. Լինչ, Շայաստան, հտ. II (ռուս.), Թիֆլիս, 1910, էջ

39, Ակ. 120: Նկ. 2. Առաջաստահավաք նավ Աղբամար կողու իհնավուրց-նավահանգստում: XIXդ. Վերջ: Դ. Հինչ, անդ էջ 167, Ակ. 140: Նկ. 3. Կիլիկյան հայոց նավ Բերդանավ/խալե, դալե, դայեղ գալեօն իտալերեն անվանումից/. որով Այստից իր ճանապարհորդությունն է սկսել հռչակավոր Մարկո Պոլոն 1271թ.: Գծանկար: Դ. Ալիշան, Սիսու-ան, Վենետիկ- Ս. Ղազար. 1885, էջ 395, Ակ. 180:

LEVON PETROSYAN

HISTORICAL AND CULTURAL SOURCES
OF THE ARMENIAN TRADITIONAL TRANSPORT

The author that already since the II millennium BC all the advanced kinds of transport and means of conveyance of the time were present in the territory of historical Armenia. This was in a sense a result of the close socio-economic, military-political, historical and cultural relations with the neighbouring highly developed early civilizations of the Near East, in the first instance, of Mesopotamia. The transport and corresponding skills and material culture were especially developed during early Middle Ages. The same can be said of Cilician

Armenian Government, which was formed in a later time /XI-XIVc./ outside the territory of the proper Armenia. Such means of conveyance and transport were presented by two and four-wheel carriages, including the gag ones, water-skin boat-rafts, sailors, etc. However, a long period of deep stagnation and even of regress stared in this, as well as in the other fields, in late medieval times as a result of centuries-old foreign rule. The author shows, how the Armenian people nevertheless managed to preserve their traditional mode of life up to the middle of XX century.

ЛЕВОН ПЕТРОСЯН
КУЛЬТУРНО - ИСТОРИЧЕСКИЕ ИСТОКИ

АРМЯНСКОГО ТРАДИЦИОННОГО ТРАНСПОРТА

На территории исторической Армении еще со II тыс. до н. э. имелись все передовые для своего времени виды транспорта и средств передвижения, что в известной мере было обусловлено тесными социально-экономическими, военно-политическими и историко-культурными связями с соседними высокоразвитыми ранними цивилизациями Переднего Востока и, прежде всего Междуречья. Транспорт с соответствующими навыками и материальной культурой был особенно развит в раннее средневековье. То же самое можно сказать относительно Киликийского Армянского государства,

образовавшейся вне территории исконной Армении в более позднее время (XI-XIVвв.). Такими средствами передвижения и транспорта были двух и четырехколесные повозки, в том числе парадные четырехколесные повозки, бурдючные лодки-плоты, парусники и т.п. Однако в позднем средневековье в результате многовекового иноземного владычества в данной отрасли, как и во всех других, настала пора глубокого застоя и даже регресса в естественном развитии. Автор показывает, как армянскому народу тем не менее удалось сохранить вплоть до середины XXв. свой традиционный уклад.

the same time, the number of people who have been infected with SARS and died from it has increased to 34. A total of 150 cases have been reported in Canada, with 100 of those being in Ontario. The first case was reported on March 12, 2003, and the most recent case was reported on April 2, 2003.

SYMPTOMS

The symptoms of SARS are similar to those of other respiratory illnesses. These include fever, headache, muscle aches, and dry cough. Some patients may also experience diarrhea, nausea, and vomiting. The illness typically begins with a fever and body aches, followed by a dry cough. The fever may last for several days, and the cough may become productive as the disease progresses. Some patients may also experience difficulty breathing, which can lead to respiratory failure. In severe cases, SARS can be fatal. Death rates have ranged from 10% to 30% in some studies. The exact cause of death is not known, but it is believed to be a combination of respiratory distress and multiple organ failure. Treatment for SARS is primarily supportive care, including oxygen therapy and intravenous fluids. In some cases, antiviral medications may be used to treat the underlying viral infection.

DIAGNOSIS


The diagnosis of SARS is based on clinical presentation and laboratory testing. The clinical presentation includes fever, headache, muscle aches, and dry cough. Laboratory testing includes blood tests, such as a complete blood count (CBC) and a chest X-ray. A chest X-ray may show infiltrates in the lungs, which are characteristic of SARS.

The treatment for SARS is primarily supportive care, including oxygen therapy and intravenous fluids. In some cases, antiviral medications may be used to treat the underlying viral infection. There is no specific treatment for SARS, and the best way to prevent the spread of the disease is to practice good hygiene, such as frequent hand washing and avoiding close contact with sick individuals. It is important to seek medical attention if you are experiencing symptoms of SARS, as early diagnosis and treatment can help prevent complications and improve outcomes. If you are traveling to an area where SARS is prevalent, it is recommended to take extra precautions, such as wearing a mask and avoiding crowded places. It is also important to stay up-to-date on the latest information about SARS and to follow the guidance of health officials.


S U H S U C U T R

ગાર્ડમાનાં


ՏԱՐԱՆԿ 1



Ակ. 1




Ակ. 2



Ակ. 3


ՏԱԽՏԱԿ II




Ակ. 1



Ակ. 2



Ակ. 3



Ակ. 4




Ակ. 5

ՏԱԽՏԱԿ 3




Նկ. 1



Նկ. 2




Նկ. 3



Նկ. 4


ՏԱՐԾԱԿ IV



Ակ. 1



Ակ. 2



Ակ. 3